ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ

ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ՓՈԽԵԼՈՒ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.04 – Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

САРГСЯН АЙК ВЛАДИМИРОВИЧ

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ИЗМЕНЕНИЯ ОБВИНЕНИЯ В ТЕЧЕНИИ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04 – Судебное право (судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности)

Ереван-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ս. Ղազինյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյան

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ. Մ. Մելքոնյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հունիսի 29-ին՝ ժամը 11⁰⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор Г. С. Казинян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор С. А. Дилбандян

кандидат юридических наук, доцент Д. М. Мелконян

Ведущая организация: Образовательный комплекс Полиции РА

Защита состоится 29-ого июня 2015 г. в 11⁰⁰ часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 27-ого мая 2015 г.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук А. А. Манасян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: ՀՀ քրեական դատավարությունում կողմերի միջև իրական իրավահավասարության երաշխավորման, մեղադրյալի պաշտպանության իրավունքի գործուն իրականացման, անկախ և մեղադրանքի կողմի դիրքորոշմամբ չկաշկանդված դատարանի ապահովման տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունի դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու ինստիտուտի կարգավորման մոդելը: Դրանով պայմանավորված՝ հայրենի քրեական դատավարությունում մեղադրանքը փոխելու ինստիտուտը ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի սկզբնական խմբագրությունից մինչև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում դրա վերաբերյալ սահմանված կարգավորումները ենթարկվել է էական փոփոխությունների: Ընդ որում, վերանայվել են ոչ միայն մեղադրանքը փոխելը կարգավորող ընթացակարգային նորմերը, այլև դրա հիմքում դրված ամբողջ տրամաբանությունը և փիլիսոփայությունը: Նշված փոփոխություններն ուղեկցվել են բազմաթիվ բանավեճերով, որոնց մի մասն իր լուծումն է ստացել ՀՀ բարձրագույն դատական ատյաններում: Բավական է միայն նշել, որ ոչ ՀՀ քրեական դատավարությունում, ոչ էլ իրավունքի մեկ այլ ճյուղում առկա չէ այնպիսի ինստիտուտ, որը կարգավորող նորմերի սահմանադրականությունը հինգ անգամ ՀՀ սահմանադրական դատարանում վեճի առարկա դարձած լինի:

Չնայած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ նաև՝ գործող օրենսգիրք), ի համեմատ դրա սկզբնական խմբագրության, մեղադրանքը փոխելու ինստիտուտը ենթարկվել է էական փոփոխությունների, դրանով սահմանված կարգավորումները բավարար չափով չեն երաշխավորում դատավարության կողմերի միջև իրական իրավահավասարությունը, մեղադրյալի պաշտպանության իրավունքի գործուն իրականացումը, իսկ օրենսդրական մակարդակով լուծում պահանջող մի շարք խնդիրներ կարգավորված չեն: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում ավարտին են մոտեցել քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ նաև Նախագիծ) մշակմանն ուղղված աշխատանքները, որը դրական եզրակացություն է ստացել ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական ոլորտի մշտական հանձնաժողովի կողմից՝ ընդգրկվելով չորսօրյա նիստերի օրակարգ:

Այսպիսով, գործող օրենսգրքով սահմանված թերությունները բացահայտելու, Նախագծով սահմանված կարգավորումները առաջին անգամ գիտական մակարդակով վերլուծելու, դրա և գործող կարգավորման միջև համեմատաիրավական վերլուծություն անցկացնելու, Նախագծով սահմանված

կարգավորումները կատարելագործելու անհրաժեշտությունն օբյեկտիվորեն արդիականություն են հաղորդում սույն հետազոտությանը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու հիմնախնդիրները հետազոտության են ենթարկվել խորհրդային և ժամանակակից դատավարագետների գիտական աշխատություններում: Հետազոտության թեմային առնչվող հիմնախնդիրները մի շարք դեպքերում դարձել են նաև ատենախոսությունների առարկա: Այդ աշխատությունների և ատենախոսությունների շարքում հատկապես պետք է ընդգծել Տ. Ն. Դոբրովոլսկայի, Ֆ. Ն. Ֆատկուլինի, Ա. Ա. Միխայլովի, Ե. Ա. Բրավիլովայի, Վ. Վ. Ռովնեյկոյի և այլոց աշխատությունները: Չնայած շարադրվածին՝ հարկ է նկատել, որ դատական քննության ընթացքում մեղադանքը փոխելու ինստիտուտը դեռևս լիարժեք կերպով ուսումնասիրված չէ, իսկ մեղադրանքը փոխելուն առնչվող մի շարք այնպիսի կարևորագույն հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են դատախազի կողմից մեղադրանքը փոխելու սահմանազատումը հարակից կարգավորումներից, առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրանքը փոխելու թույլատրելիության պայմանները, ընդհանրապես բացակայում է որևէ գիտական հետազոտություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են դատական քննության ընթացքում դատախազի, դատարանի, իսկ վերաքննիչ վարույթում՝ վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքները և դրանց իրավաբանական գնահատական փոխելը կարգավորող դատավարական հարաբերությունները: Որպես հետազոտության առարկա հանդես են գալիս մեղադրանքը փոխելը հարակից կարգավորումներից սահմանազատող, դատախազի, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքները և դրանց իրավաբանական գնահատականը փոխելը կարգավորող օրենսդրությունը, Նախագիծը և իրավակիրառ պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու ինստիտուտի հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակումը:

Նշված նպատակը ենթադրում է լուծել հետևյալ խնդիրները.

- սահմանել դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու հասկացությունը՝ դասակարգելով այն տեսակների և պատճառների,

- համեմատահիրավական վերլուծության ենթարկել գործող օրենսգրքով և Նախագծով դատախազի կողմից մեղադրանքը փոխելու կարգն ու պայմանները՝

հիմնավորելով Նախագծով կատարված փոփոխությունների առաջնայնությունը ու սահմանազատելով դատախազի կողմից մեղադրանքը փոխելը հարակից դատավարական կարգավորումներից,

- հիմնավորել ՀՀ քրեական դատավարությունում դատարանի՝ մեղադրյալին վերագրվող արարքի իրավաբանական գնահատականը փոխելու, այդ թվում՝ խստացման առումով, լիազորություն նախատեսելու անհրաժեշտությունը՝ համադրելով այն հակադիր՝ մեղադրանքի իրավաբանական գնահատականով դատարանի կաշկանդված լինելու կարգավորման հետ,

- համեմատահիրավական վերլուծության ենթարկել գործող օրենսգրքով և Նախագծով դատարանի կողմից մեղադրանքը փոխելու կարգն ու պայմանները՝ սահմանելով Նախագծով կատարված փոփոխությունների առաջնայնությունը և ներկայացնել առաջարկություններ Նախագիծն առավել կատարելագործելու ակնկալիքով,

- հետազոտել վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավական գնահատականը փոխելու հիմնախնդիրը,

- կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել Նախագծով նախատեսված մեղադրանքը փոխելու կարգավորումների կատարելագործմանը միտված առաջարկներ:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքը ձևավորվել է քրեական դատավարության դատական քննության ընթացքում մեղադրանքի փոխելու ինստիտուտին նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրներից: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Գ. Ս. Ղազինյանի, Ս. Ա. Դիլբանդյանի, Ա. Ս. Ղամբարյանի, Տ. Ն. Դոբրովոլսկայի, Ֆ. Ն. Ֆատկուլինի, Ա. Ա. Միխայլովի, Ե. Ա. Բրավիլովայի, Վ. Վ. Ռովնեյկոյի, Պ. Վ. Դավիդովի, Վ. Ն. Կուդրյավցևի, Մ. Ի. Բաժանովի, Լ. Վ. Գոլովկոյի, Հ. Ռադկեի և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմք են հանդիսացել դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելուն առնչվող ՀՀ և արտասահմանյան նորմատիվ իրավական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ, վերաքննիչ քրեական և առաջին ատյանի դատարանների դատական ակտերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության նպատակով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկայի և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդների օգտագործմամբ:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն այն է, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկվել և վերլուծվել են դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու տեսական և գործնական հիմնախնդիրները: Ընդ որում, նշված վերլուծությունները կատարվել են ոչ միայն ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի, այլև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի վերլուծության միջոցով, որում մեղադրանքը փոխելու վերաբերյալ առաջարկվող կառուցակարգերը հեղափոխական են ոչ միայն հայրենի քրեական դատավարության, այլև ընդհանրապես հետխորհրդային երկրների քրեական դատավարությունների համար: Արդյունքում ոչ միայն կատարվել են տեսական եզրահանգումներ, այլև ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ՝ ուղղված նշված ինստիտուտի կատարելագործմանը:

Ատենախոսությունում հիմնավորվել է, որ ներկայումս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ մեղադրանքը փոխելու մոդելը բավարար չէ մեղադրյալի պաշտպանության իրավունքը երաշխավորելու համար:

Ատենախոսությունում սահմանազատվել է դատախազի կողմից մեղադրանքը փոխելը մի շարք հարակից ինստիտուտներից և կարգավորումներից՝ մեղադրանքը շտկելուց, այլ հանցագործության կատարման համար նոր մեղադրանք առաջադրելուց, մեղադրանքից մասնակի հրաժարվելուց: Ատենախոսության մեջ փորձ է արվել հիմնավորել դատարանին մեղադրանքի իրավաբանական կողմը խստացման առումով փոխելու լիազորության տրամադրման իրավաչափությունը, ինչը հակասում է ինչպես հայրենի, այնպես էլ հետխորհրդային քրեական դատավարությունում ձևավորված այն կարծրատիպին, ըստ որի՝ դատարանը մեղադրանքը չի կարող փոխել խստացման առումով, քանի որ այդ դեպքում նա արդարադատություն իրականացնող մարմնից կվերածվի քրեական հետապնդում իրականացնողի: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործման առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Դատաքննության ընթացքում մեղադրանքը փոխելն իրավասու սուբյեկտների կողմից մեղադրական եզրակացության մեջ արտացոլված մեղադրանքի փաստական կողմի և/կամ իրավաբանական գնահատականի փոփոխություններն են, որոնք կատարվում են օրենքով հստակ ամրագրված սահմանների շրջանակներում, իրականացվում են դատավարական

ընթացակարգին համապատասխան և արտահայտվում են նշված սուբյեկտների կողմից ընդունված դատավարական ակտերում:

2. ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու պատճառներն են՝

1) փաստական հանգամանքների ի հայտ գալը, որոնք մինչդատական վարույթի ընթացքում մեղադրողին հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել,

2) փաստական հանգամանքների ի հայտ գալը, որոնք մինչդատական վարույթի ընթացքում մեղադրողին հայտնի են եղել կամ կարող էին հայտնի լինել պատշաճ նախաքննություն անցկացնելու դեպքում,

3) մեղադրյալին մեղսագրվող արարքին սկզբնական մեղադրանքով սխալ տրված իրավական գնահատականը,

4) մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը նախատեսող քրեական օրենսգրքի նորմի մեղմացման առումով փոփոխությունը,

5) մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ տրված մեկնաբանությունները,

6) մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակում նախատեսող քրեական օրենսգրքի նորմի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իրավական դիրքորոշում արտահայտելը:

3. Դատական քննության ընթացքում դատախազի կողմից մեղադրանքը փոխելն անհրաժեշտ է տարբերակել դատախազի կողմից մեղադրանքը շտկելուց: Առաջինը պետք է կատարվի այն դեպքերում, երբ մեղադրանքում կատարվող փոփոխությունների արդյունքում՝

1) փոխվում է արարքի իրավաբանական որակումը,

2) արարքի միևնույն իրավաբանական որակման շրջանակներում փոխվում են հանցակազմի հատկանիշները,

3) լրացվում կամ հանվում են մեղադրյալի միասնական դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության դրվագները,

4) առանց արարքի իրավաբանական որակման, հանցակազմի հատկանիշների կամ հանցագործության դրվագների քանակի փոփոխության փոխվում է մեղադրանքի ձևակերպումը, այն է՝ մեղադրյալին, իսկ հանցակցության պարագայում՝ յուրաքանչյուր հանցակցին մեղսագրվող գործողությունների (անգործության) նկարագրությունը:

Միաժամանակ մեղադրանքի ձևակերպման մեջ խմբագրական բնույթի թերությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ է դատախազին օրենսդրորեն օժտել մեղադրանքը շտկելու լիազորությամբ, որը պետք է

կատարվի բանավոր հայտարարություն անելու ձևով:

4. Մեղադրյալին առաջադրված մեղադրանքի փոփոխությունը պետք է տարբերակել այլ հանցագործություն կատարելու համար նրան նոր մեղադրանք առաջադրելուց: Եթե դատական քննության ընթացքում ի հայտ են գալիս հանգամանքներ, որոնք վկայում են, որ սկզբնական մեղադրանքով մեղադրյալին վերագրվող արարքը պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցագործության հատկանիշներ (իդեալական համակցություն), ապա մեղադրանքը ենթակա է փոխվելու: Իսկ եթե ի հայտ եկած հանգամանքները վկայում են մեղադրյալի կողմից քրեական օրենսգրքով նախատեսված հատկանիշներ պարունակող մեկ այլ արարք կատարելու մասին (իրական համակցություն), ապա մեղադրանքը ենթակա չէ փոխվելու, և նոր ի հայտ եկած փաստական հանգամանքի առնչությամբ քրեական հետապնդումը պետք է իրականացվի առանձին վարույթով:

Դատական քննության ընթացքում դատախազի կողմից մեղադրանքը փոխելու թույլատրելիության հարցը լուծելիս անհրաժեշտ է հստակ տարբերակել հանցագործությունների իրական (ռեալ) համակցությունը և եզակի հանցագործությունները: Եթե ի հայտ եկած փաստական հանգամանքներով մեղադրյալին մեղսագրվող արարքը սկզբնական մեղադրանքով մեղադրյալին վերագրվող արարքի հետ ընդգրկված է մեկ միասնական դիտավորության մեջ, այսինքն՝ դրանք միասին կազմում են մեկ միասնական հանցագործություն, ապա մեղադրանքը ենթակա է փոխվելու, իսկ եթե ի հայտ եկած փաստական հանգամանքներով մեղադրյալին վերագրվող արարքը սկզբնական մեղադրանքով մեղադրյալին մեղսագրվող արարքի հետ ընդգրկված չէ միասնական դիտավորության մեջ, այսինքն՝ մեղադրյալի արարքներում առկա է իրական համակցությունը, ապա մեղադրանքը ենթակա չէ փոխվելու:

5. Դատախազի կողմից մեղադրանքի փոփոխությունը չպետք է օգտագործվի մինչդատական վարույթի ընթացքում թույլ տված սխալներն ուղղելու նպատակով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված առանց քննչական գործողությունների կատարման մեղադրանքը փոխելու ռեժիմը, հնարավորություն տալով դատախազին փոխել մեղադրանքն այն դեպքերում, երբ մեղադրանքը փոխելու հիմք հանդիսացող փաստական հանգամանքները հայտնի են եղել նախնական քննության ընթացքում կամ կարող էին հայտնի լինել պատշաճ նախաքննություն անցկացնելու պարագայում, խախտում է իրավահավասարության սկզբունքը: Միաժամանակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասը, մեղադրանքը փոխելը կապելով բացառապես դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտման հետ, անտեսում է մի շարք դեպքերում

մեղադրանքը փոխելու օբյեկտիվ անհրաժեշտությունը: Հետևաբար, օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասը ենթակա է փոփոխության այն նպատակով, որպեսզի դրանով նախատեսված մեղադրանքը փոխելու ռեժիմը կիրառելի լինի ոչ միայն այն դեպքերում, երբ մեղադրանքը փոխելը հետևանք է ապացույցների հետազոտման, այլև՝ ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխության, ՀՀ սահմանադրական կամ վճռաբեկ դատարանների որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշման:

6. Դատարանի կողմից մեղադրանքը փոխելիս մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի խախտվում, եթե միաժամանակ՝

1) մեղադրանքի հիմքում չեն ներառվում այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք դրված չեն եղել նրան ներկայացված մեղադրանքի և դատախազի կողմից հաստատված մեղադրական եզրակացության հիմքում,

2) միևնույն փաստական հանգամանքների շրջանակներում մեղադրանքի իրավաբանական գնահատականը փոխելիս մեղադրյալը կարողանում է կանխատեսել դատարանի կողմից մեղադրանքի իրավական գնահատականի փոփոխման հնարավորությունը և կարողանում է ժամանակին ու արդյունավետ կերպով արձագանքել դրան, բացառությամբ այն դեպքերի, երբ սկզբնական և փոփոխված մեղադրանքների միջև գործում է կլանման սկզբունքը, այսինքն՝ սկզբնական մեղադրանքի իրավաբանական գնահատականը ներառում է փոփոխված մեղադրանքի իրավաբանական գնահատականը:

7. Ելնելով մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների նկատմամբ դատարանի ճիշտ նյութական նորմ կիրառելու պարտականությունից՝ ՀՀ քրեական դատավարությունում անհրաժեշտ է սահմանել առաջին ատյանի դատարանի՝ մեղադրյալին վերագրվող արարքի իրավաբանական գնահատականն ազատ, այդ թվում՝ խստացման առումով, փոխելու լիազորությունը, որը պետք է իրականացվի այնպիսի իրավական մեխանիզմի շրջանակներում, որի ընթացքում մեղադրյալը կարողանա կանխատեսել դատարանի կողմից տարբերվող իրավական գնահատական կիրառելու հնարավորությունը և ունենա բավարար ժամանակ ու հնարավորություն՝ պաշտպանվելու դրանից:

8. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում անհրաժեշտ է հստակ նախատեսել այն դեպքերը, թե երբ է վերաքննիչ դատարանը մեղադրյալի արարքի իրավաբանական որակման սխալ լինելու հիմքով իրավասու բեկանել առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ վարույթը փոխանցելով առաջին ատյանի դատարան նոր քննության, իսկ երբ կայացնել դատական ակտ՝ մեղադրյալի արարքին տալով նոր իրավաբանական գնահատական: Նշված տարբերակման հիմքում պետք է դրվի մեղադրյալի պաշտպանության

իրավունքը, այսինքն՝ վերաքննիչ դատարանի կողմից իրավաբանական գնահատականը փոխելիս արդյո՞ք մեղադրյալը կարողանում է կանխատեսել դատարանի կողմից մեղադրանքի իրավական գնահատականը փոխելու հնարավորությունը և արդյո՞ք կարողանում է ժամանակին ու արդյունավետ կերպով արձագանքել դրան: Ելնելով նշվածից՝ որպես ընդհանուր կանոն պետք է սահմանվի, որ մեղադրանքի իրավաբանական գնահատականը սխալ լինելու դեպքում առաջին ատյանի դատարանի դատավճիռը պետք է բեկանվի՝ վարույթն ուղարկելով նոր քննության, որից պետք է սահմանվի երեք բացառություն:

Առաջին՝ վերաքննիչ դատարանը պետք է իրավասություն ունենա փոխելու արարքի իրավաբանական գնահատականը՝ առանց գործը նոր քննության ուղարկելու, եթե վերաքննիչ դատարանի կողմից կիրառվող իրավաբանական գնահատականը համընկնում է առաջին ատյանի դատարանում դատախազի կողմից պաշտպանվող մեղադրանքի իրավաբանական գնահատականին, որը, սակայն, փոխվել է առաջին ատյանի դատարանի կողմից: Երկրորդ՝ վերաքննիչ դատարանը պետք է իրավասություն ունենա փոխելու արարքի իրավաբանական գնահատականը՝ առանց գործը նոր քննության ուղարկելու, եթե նրա կողմից կիրառվող իրավաբանական գնահատականը առաջին ատյանի դատարանում քննության ժամանակ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում քննարկվել է կողմերի հետ, սակայն վերդիկտով չի սահմանվել որպես մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների իրավաբանական գնահատական: Երրորդ՝ վերաքննիչ դատարանը պետք է իրավասություն ունենա փոխելու արարքի իրավաբանական գնահատականը՝ առանց գործը նոր քննության ուղարկելու, եթե նրա կողմից կիրառվող իրավաբանական գնահատականը ներառվում է առաջին ատյանի դատարանի ակտով մեղադրյալի արարքին տրված իրավաբանական գնահատականի մեջ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների տեսական նշանակությունն ամենից առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ այն հայրենի իրավագիտության մեջ քրեական դատավարության դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու ինստիտուտին վերաբերող տեսական և գործնական խնդիրների ուսումնասիրությանը նվիրված առաջին համալիր աշխատանքն է:

Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելուն: Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց

հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության ժամանակ, ինչպես նաև նպաստել դատական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական դատավարության ամբիոնում, ինչպես նաև արտացոլվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր հանդեսներում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության եզրակացությունների և առաջարկների որոշ մասն իրենց ամրագրումն են ստացել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից տրված փորձագիտական եզրակացության մեջ (պատրաստվել է հեղինակի կողմից) և ՀՀ սահմանադրական դատարանի «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ» գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցչի գրավոր բացատրությունում (հեղինակը եղել է ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչը):

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 10 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառնական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու էությունը» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Քրեական դատավարությունում մեղադրանքի հասկացությունը, կառուցվածքը և տեսակները» վերտառությամբ, հեղինակը վերլուծում է մեղադրանքի հասկացությունը, կառուցվածքը և տեսակներն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է դատական քննության

ընթացքում մեղադրանքը փոխելու տեսական և գործնական հիմնախնդիրները մանրամասն հետազոտելու համար:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու հասկացությունը և տեսակները» վերտառությամբ, հեղինակը նախ քննարկում է մեղադրանքը փոխելու հասկացությունը: Ներկայացնելով նշված հասկացության վերաբերյալ տեսության մեջ առկա դիրքորոշումը՝ հեղինակը մանրամասն վերլուծում է դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու հասկացության հատկանիշները՝ տալով դրա սահմանումը: Ապա հեղինակը քննարկում է մեղադրանքը փոխելու և դատական քննության սահմանների փոխհարաբերությունը և ներկայացնում դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու տեսակները՝ քննարկելով դրանցից յուրաքանչյուրը:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու պատճառները» վերտառությամբ, հեղինակը քննարկում է դատական քննության ընթացքում մեղադրանքը փոխելու պատճառները: Նախ և առաջ սահմանելով մեղադրանքը փոխելու պատճառների հասկացությունը՝ հեղինակը մանրամասն վերլուծում է մեղադրանքը փոխելու պատճառները՝ դրանք դասակարգելով իրավական և փաստական հանգամանքների: Ապա հեղինակը բացահայտում է մեղադրանքը փոխելու հիմք հանդիսացող իրավական և փաստական հանգամանքների շրջանակը: Նշված պարագրաֆում հեղինակը փորձ է անում նաև սպառիչ կերպով սահմանվել գործող օրենսգրքով մեղադրանքը փոխելու պատճառները՝ համապատասխան օրինակներ բերելով իրավակիրառ պրակտիկայից:

Երկրորդ գլուխը՝ «Դատական քննության ընթացքում մեղադրողի կողմից մեղադրանքը փոխելու հիմնախնդիրները» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Դատական քննության ընթացքում դատախազի կողմից մեղադրանքը փոխելու սահմանազատումը հարակից դատավարական կարգավորումներից» վերտառությամբ, հեղինակը փորձ է անում սահմանազատել դատախազի կողմից մեղադրանքը փոխելը հարակից դատավարական կարգավորումներից՝ մեղադրանքից մասնակի հրաժարվելուց, մեղադրանքը շտկելուց, հանցագործության կատարման նոր մեղադրանք առաջադրելուց: Նախ և առաջ հեղինակը վերլուծում է այն հանգամանքները, որոնց ի հայտ գալու դեպքում մեղադրողը պետք է որոշում կայացնի մեղադրանքը փոխելու վերաբերյալ՝ տարբերակելով մեղադրանքը փոխելը մեղադրանքը շտկելուց և առաջարկելով մեղադրանքում խմբագրական բնույթի փոփոխությունները կատարելու համար սահմանել մեղադրողի՝ մեղադրանքը

շտկելու լիազորությունը:

Այնուհետև հեղինակը նշում է, որ մեղադրանքի փոխելու թույլատրելիության հարցը լուծելիս, ելնելով պատժի անհատականացման և կրկին անգամ դատապարտելու անթույլատրելիության արգելքից, անհրաժեշտ է հստակ սահմանազատել իրական, իդեալական համակցությունները և եզակի հանցագործությունները՝ տալով համապատասխան լուծումներ: Ապա հեղինակն քննարկում է դատախազի կողմից մեղադրանքը փոխելու և մեղադրանքից հրաժարվելու տարբերությունները՝ տարանջատելով մեղադրանքը փոխելը և մեղադրանքից մասնակի հրաժարվելը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Դատական քննության ընթացքում դատախազի կողմից մեղադրանքը փոխելու ռեժիմները» վերտառությամբ, հեղինակը քննարկում է դատախազի կողմից մեղադրանքը փոխելու՝ գործող օրենսգրքով և Նախագծով սահմանված ռեժիմները: Հեղինակը մանրամասն վերլուծում է գործող օրենսգրքով սահմանված քննչական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոխելու և առանց քննչական գործողությունների կատարման մեղադրանքը փոխելու ռեժիմները, դրանց կիրառման պայմաններն ու տարբերությունները, դրանց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները: Ապա հետազոտում է դատախազի կողմից մեղադրանքը փոխելու՝ Նախագծով սահմանված ռեժիմները՝ համեմատաիրավական վերլուծություն անցկացնելով գործող օրենսգրքով սահմանված կարգավորումների միջև և արձանագրելով Նախագծով սահմանված կարգավորումների առաջնայնությունը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Դատական քննության ընթացքում դատախազի կողմից մեղադրանքը փոխելու ընթացակարգը և տուժողի շահերի պաշտպանությունը» վերտառությամբ, հեղինակը վերլուծում է դատախազի կողմից մեղադրանքը փոխելու կարգը և քննչական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոխելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու, առանց քննչական գործողությունների կատարման մեղադրանքը փոխելու, Նախագծով սահմանված մեղադրանքը փոխելու ժամանակային սահմանները: Ապա հեղինակը քննարկում է մեղադրանքը փոխելիս տուժողի շահերի պաշտպանությունը՝ անդրադառնալով դրա վերաբերյալ տեսության մեջ առկա մոտեցումներին: Վերլուծելով Նախագծով սահմանված կարգավորումները՝ հեղինակը եզրահանգում է ՀՀ քրեական դատավարությունում սուբսիդիար մեղադրողի ինստիտուտի նախատեսման անհրաժեշտության բացակայության մասին:

Երրորդ գլուխը՝ «Դատական քննության ընթացքում դատարանի կողմից մեղադրանքը փոխելու հիմնախնդիրները» վերտառությամբ, բաղկացած է չորս

պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրանքը փոխելու պայմանները և կարգը համաձայն ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի» վերտառությամբ, հեղինակը վերլուծում է գործող օրենսգրքով դատարանի կողմից մեղադրանքը փոխելու պայմանները: Հեղինակը մանրամասն բացահայտում է «մեղադրյալի վիճակի վատթարացման անթույլատրելիությունը» և «մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման անթույլատրելիությունը»: Վերլուծելով նշված պայմանները՝ հեղինակը, հիմնվելով Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի վրա, հանգում է այն եզրակացության, որ մեղադրյալի պաշպանության իրավունքը կարող է խախտվել ինչպես մեղադրյալին մեղսագրվող փաստական հանգամանքների փոփոխության, այնպես էր մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակման փոփոխության դեպքում:

Վերլուծելով առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրանքը փոխելու կարգը՝ հեղինակը նշում է, որ գործող օրենսգիրքը չի նախատեսել որևէ իրավական ընթացակարգ, որի շրջանակներում դատարանը դատավարության կողմերի հետ կարող է քննարկել մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների նկատմամբ այլ իրավական գնահատական կիրառելու հնարավորությունը: Այդ պատճառով դատարանի կողմից մեղադրյալի արարքի իրավական որակումը փոխելիս խախտվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ սկզբնական մեղադրանքի իրավական գնահատականը կլանում է փոփոխված մեղադրանքի իրավական գնահատականը:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Մեղադրանքի իրավական կողմն ազատ փոխելու դատարանի լիազորության իրավաչափության հիմնախնդիրը» վերտառությամբ, հեղինակը քննարկում է առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքի իրավական գնահատականն ազատորեն, այդ թվում՝ խստացման առումով փոխելու լիազորություն տրամադրելու իրավաչափությունը: Բացահայտելով «մեղքի» սկզբունքը, արևմտյան եվրոպական երկրների մեղադրանքի սկզբունքը և մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների հանդեպ ճիշտ նյութական նորմ կիրառելու լիազորությունը՝ հեղինակը եզրահանգում է, որ լիովին իրավաչափ է դատարանին համապատասխան լիազորության տրամադրումը:

Հեղինակը հիմնավորում է, որ նման կարգավորման սահմանումը ՀՀ քրեական դատավարությունում ի պաշտոնե քննության մոդելի մասնակի ներդրման դրսևորում է: Միաժամանակ, հեղինակը քննարկում է այն դեպքերը, երբ դատարանի կողմից մեղադրանքը փոխելու արդյունքում այն հանրային

քրեական հետապնդման տիրույթից տեղափոխվում է մասնավոր տիրույթ:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրանքը փոխելու պայմանները և կարգը համաձայն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի» վերտառությամբ, հեղինակը մանրամասն վերլուծում է Նախագծով սահմանված դատարանի կողմից մեղադրանքը փոխելու կարգը և պայմանները՝ համեմատիրավական վերլուծություն անցկացնելով գործող օրենսգրքով սահմանված կարգավորումների հետ: Հեղինակը մանրամասն քննարկում է դատարանի կողմից տարբերվող իրավական գնահատականը քննարկելու դատավարական ընթացակարգը՝ ներկայացնելով առաջարկություններ դրանց կատարելագործման ուղղությամբ:

Երրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավական գնահատականը վերաքննիչ դատարանում փոխելու առանձնահատկությունները» վերտառությամբ, հեղինակն անդրադառնում է վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը փոխելու առանձնահատկություններին: Հեղինակը նշում է, որ Նախագծով սահմանված կարգավորումները բավարար չեն վերաքննիչ դատարանի կողմից արարքի իրավաբանական գնահատականը փոխելիս մեղադրյալի պաշտպանության իրավունքի երաշխավորման համար:

Ելնելով դրանից՝ հեղինակն առաջարկում է Նախագծում կատարել անհրաժեշտ փոփոխություններ վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական գնահատականը փոխելիս մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով՝ սահմանելով այն դեպքերը, թե երբ է վերաքննիչ դատարանը մեղադրյալի արարքի իրավաբանական որակման սխալ լինելու հիմքով իրավասու բեկանել առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ վարույթը փոխանցելով առաջին ատյանի դատարան նոր քննության, իսկ երբ կայացնել դատական ակտ՝ մեղադրյալի արարքին տալով նոր իրավաբանական գնահատական:

Ատենախոսության եզրակացություններում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:

1. Ինչպես գործող օրենսգրքով, այնպես Նախագծով նախատեսված «մեղադրանքը լրացնել» ձևակերպումը մեղադրանքը փոխելու տեսակ է՝ մեղադրանքի ծավալի ընդլայնման միջոցով: Հետևաբար «մեղադրանքը լրացնել» եզրույթի օրենսդրական նախատեսումը չունի որևէ նորմատիվ անհրաժեշտություն, և դրա առանձին նախատեսումը որևէ ինքնուրույն խնդիր չի լուծում: Ուստի, առաջարկում ենք այն հանել Նախագծից:

2. Դատական քննության ընթացքում դատախազի կողմից մեղադրանքը փոխելն անհրաժեշտ է տարբերակել մեղադրանքից մասնակի հրաժարվելուց: Եթե համապատասխան գործողությունը ինքնուրույն հանցագործություն չէ, որի կապակցությամբ մեղադրյալի հանդեպ կարող էր իրականացվել առանձին վարույթով քրեական հետապնդում, մեղադրողը պետք է կայացնի մեղադրանքը փոխելու մասին որոշում: Հետևաբար, այն դեպքերում, երբ առկա է իրական համակցություն, դատախազը պետք է որոշում կայացնի մեղադրանքից մասնակի հրաժարվելու վերաբերյալ: Իսկ երբ առկա է եզակի հանցագործություն կամ իդեալական համակցություն, դատախազը պետք է որոշում կայացնի մեղադրանքը փոխելու վերաբերյալ:

3. Գործող օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված քննչական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոխելու ռեժիմը, լինելով մի քանի քայլ առաջ լրացուցիչ նախաքննության ինստիտուտից, հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 24.07.2007թ. ընդունված ՍԴՈ-710 որոշման մեջ արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, ըստ որի՝ եթե քրեական գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է հանգուցալուծվի դատական նիստում, և ՍԴՈ-872 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշմանը, ըստ որի՝ մեղադրանքի փոփոխությանը նախորդող գործընթացը պետք է լինի հրապարակային դատաքննության շրջանակներում և դուրս չգա դատական վերահսկողությունից:

4. Այն դեպքում, երբ ի հայտ են եկել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք գործի նախորդ քննության ընթացքում հայտնի չեն եղել և չէին էլ կարող հայտնի լինել, գործող օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված ռեժիմների միջև տարբերակումը և ընտրությունը պետք է իրականացվի ոչ թե կատարված հանցագործության, այլ այն քննչական և դատավարական գործողությունների բնույթի հիման վրա, որոնք անհրաժեշտ է կատարել նոր ի հայտ եկած փաստական հանգամանքները հետազոտելու համար: Եթե նոր ի հատ եկած հանգամանքը կարող է հաստատվել անմիջապես դատարանում՝ դատական քննության սահմաններում հասանելի դատավարական գործողություններով, ապա քննչական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոխելու ռեժիմը չի կարող կիրառվել:

5. Քննչական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոխելու ռեժիմի միջոցով նախկինում կատարված թերի նախաքննութան լրացումը կանխելու նպատակով ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում անհրաժեշտ է սահմանել, որ եթե կատարված քննչական կամ այլ դատավարական գործողությունների արդյունքում մեղադրանքի կողմը չի փոխում մեղադրյալին առաջադրված մեղադրանքը, ապա սկզբնական մեղադրանքի հիմքում չեն կարող

դրվել այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել համապատասխան քննչական գործողությունների արդյունքում:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, դատարանին օժտելով մեղադրյալին առաջադրված մեղադրանքը մեղմացման առումով փոխելու լիազորությամբ, չի նախատեսել որևէ իրավական ընթացակարգ, որի շրջանակներում դատարանը դատավարության կողմերի հետ կարող է քննարկել մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների նկատմամբ այլ իրավական գնահատական կիրառելու հնարավորությունը: Այդ պատճառով դատարանի կողմից մեղադրյալի արարքի իրավական որակումը փոխելիս խախտվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ սկզբնական մեղադրանքի իրավական գնահատականը կլանում է փոփոխված մեղադրանքի իրավական գնահատականը: Նշված օրենսդրական բացը հանգեցնում է նրան, որ դատարանի կողմից մեղադրանքը փոխելու արդյունքում այն հանրային քրեական հետապնդման տիրույթից մասնավոր տիրույթ տեղափոխվելու դեպքում առաջանում են իրավիճակներ, երբ խորհրդակցական սենյակ հեռացած դատարանը չի կարողանում պարզել տուժողի ցանկությունը մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

7. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով նախատեսվել է դատավարության կողմերի հետ տարբերվող իրավաբանական գնահատականը քննարկելու ընթացակարգը: Սակայն կարծում ենք՝ դատարանի կողմից դատավարության կողմերին օրենքի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ հարցեր ուղղելը կամ դրա վերաբերյալ դատախազի, պաշտպանի և տուժողի ներկայացուցչի մասնակցությամբ առանձին խորհրդակցություն անցկացնելը բավարար չէ ապահովելու մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Նման կարգավորման դեպքում կատարվում է միմիայն իրավաբանական գնահատականը փոխելիս մեղադրյալի պաշտպանության իրավունքի առաջին նախապայմանը. մեղադրյալը կարողանում է կանխատեսել դատարանի կողմից մեղադրանքի իրավական գնահատականի փոփոխման հնարավորությունը: Ի լրումն նշված կարգավորման՝ Նախագծով մեղադրյալի պաշտպանության իրավունքը լիարժեք ապահովելու նպատակով անհրաժեշտ է սահմանել, որ դատարանը տարբերվող իրավաբանական գնահատականի հարցը քննարկելու դեպքում պաշտպանության կողմի միջնորդությամբ կարող է հետաձգել դատական նիստը՝ հնարավորություն տալով վերջինիս ձեռնարկել պաշտպանության նոր միջոցներ:

8. Նախագծով սահմանված կարգավորման պայմաններում անհրաժեշտ է ազատել դատարանին տարբերվող իրավաբանական գնահատականի հարցը

դատավարության կողմերի հետ քննարկելու պարտականությունից այն դեպքերի համար, երբ տարբերվող իրավական գնահատականը կազմում է մեղադրանքում նշված իրավաբանական գնահատականի մասը: Նշված դեպքում գործում է կլանման սկզբունքը, երբ հանցակազմի որակյալ հատկանիշներ պարունակող մեղադրանքը ներառում է հասարակ («նոմինալ») մեղադրանքը, և կողմերի հետ այն նախապես չքննարկելը որևէ կերպ չի խախտում մեղադրյալի պաշտպանության իրավունքը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման հիմնահարցերը ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // <<Պետություն և իրավունք>>, թիվ 1(59), Երևան, 2013, էջեր 138-147:

2. Դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման հիմնահարցերը ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // <<Պետություն և իրավունք>>, թիվ 2(64), Երևան, 2014, էջեր 130-144:

3. Դատական քննության սահմանները մրցակցության և ի պաշտոնե քննության մոդելներում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ԵՊՀ., իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան.-Եր.: ԵՊՀ հրատ., 2014, էջեր 268-281:

4. Մեղադրանքի իրավաբանական գնահատականը վերաքննիչ դատարանում փոխելու առանձնահատկությունները՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // «Պետություն և իրավունք», թիվ 1(67), Երևան 2015, էջեր 24-34:

5. Մեղադրանքի փոփոխման տեսակները և սահմանազատումը հարակից ինստիտուտներից // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014թ. նստաշրջանի նյութերի ժողովածու / ԵՊՀ., իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. - Եր.: ԵՊՀ հրատ., 2015, էջեր 416-434:

САРГСЯН АЙК ВЛАДИМИРОВИЧ

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ИЗМЕНЕНИЯ ОБВИНЕНИЯ В ТЕЧЕНИИ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА

РЕЗЮМЕ

В уголовном судопроизводстве РА с точки зрения обеспечения между сторонами гарантии правового равенства, практической реализации права защиты обвиняемого, независимого и не связаннного позицией обвиняющей стороны суда решающее значение имеет модель института изменения обвинения в ходе судебного разбирательства. Обусловленная этим необходимость во вскрытии недостатков в действующим кодексе, в анализе впервые на научном уровне установленных Проектом регулирований, в проведении сравнительно-правового анализа между ними и действующим регулированием, в совершенствовании установленных Проектом регулирований актуализируют настоящее исследование.

Следует отметить, что в отечественной юриспруденции институт изменения обвинения в ходе судебного разбирательства все еще недостаточно изучен, а по ряду касающихся изменения обвинения таких важнейших вопросов, какими являются разграничение прокурором изменения обвинения от смежных упорядочений, условия допустимости изменения обвинения судом первой инстанции, вообще отсутствуют в каком-либо научном исследовании. Исходя из вышеизложенного, автор в работе пытается всесторонне проанализировать институт изменения обвинения.

Автор прежде всего обсудил само понятие изменения обвинения. Представляя существующую в теории по указанному понятию позицию, автор подробно анализирует признаки понятия изменения обвинения в ходе судебного разбирательства, давая его определение. Затем попытался исчерпывающим образом установить причины изменения обвинения действующим кодексом, приводя соответствующие примеры из правоприменительной практики.

Изучив общие вопросы касающиеся изменения обвинения, автор обратился к основным проблемам изменения обвинения прокурором и судом. Прежде всего автор разграничил изменение обвинения прокурором от сопутствующих регулирований – частичного отказа от обвинения, исправления обвинения, выдвижения нового обвинения в совершении преступления. Автор анализирует те обстоятельства, в случае появления которых обвинитель должен вынести решение по изменению обвинения.

Далее автор отмечает, что при решении вопроса допустимости изменения обвинения, исходя из принципа персонализации наказания и недопустимости повторного осуждения, необходимо четко дифференцировать реальная и идеальная совокупности преступлений и единичные преступления, давая соответствующие решения. В то же время автор обсуждает разницу между изменением прокурором обвинения и отказом от обвинения. Затем автор обсуждает режимы, установленные действующим кодексом и Проектом нового кодекса изменения обвинения со стороны прокурора. Автор подробно анализирует определенные действующим кодексом и Проектом нового кодекса режимы, проведя сравнительно-правовой анализ между ними и отмечая приоритетность установленных Проектом регулирований.

Автор анализирует условия изменения обвинения судом по действующему кодексу. Анализируя указанные условия, автор, опираясь на правоприменительную практику Европейского суда, приходит к заключению, что действующий кодекс не предусмотрел какой-либо правовой процедуры, в рамках которой суд вместе со сторонами судопроизводства может обсуждать возможность применения иной правовой оценки в отношении приписываемых обвиняемому фактических обстоятельств. Этому следует анализ определенный Проектом регулирований, констатируя их приоритетность и представляя предложения по их дальнейшему совершенствованию.

Автор обсуждает также правомерность предоставления полномочия суду первой инстанции изменять правовую оценку обвинения, в том числе в плане ужесточения, приходя к заключению о его справедливости.

HAYK SARGSYAN

THE THEORETICAL AND PRACTICAL ISSUES OF CHANGING CRIMINAL INDICTMENT DURING COURT HEARINGS

SUMMARY

The regulation of the changing of criminal indictment during court hearings is of crucial importance from the perspective of the principle of real equality between the parties, the proper implementation of the right of defence by the accused and the assurance of independent and unbiased justice. Hence the actuality of the following research is objectively justified by the necessity of revealing the flaws in the existing Criminal procedure code of the Republic of Armenia, of analyzing the regulations of the Draft Criminal procedure code of in new the Republic of Armenia, of carrying out a comparative legal analysis between the existing legislation and the Draft and of improving the regulations set forth in the Draft.

It is noteworthy to mention that the issue of changing criminal indictment during court hearings is not fully examined in national jurisprudence. Moreover, some of the issues related to changing criminal indictment, such as the distinction between the latter and other related regulations by the prosecutor, the conditions for permissibility of changing the criminal indictment by the Court of First Instance are completely left out of the scope of academic research. To summarize all the mentioned above, the author attempts to comprehensively analyze the issue of changing criminal indictment during court hearings.

The author firstly discussed the notion of changing criminal indictment during court hearings. After introducing the concepts existing in the theory, the author thoroughly analyzes the characteristics of the notion of changing criminal indictment during court hearings. An attempt to propound the exhaustive list of the reasons for changing the indictment has been carried out by referring to examples from practice.

Alongside the examination of common issues related to amending the indictment, the author thoroughly referred to the main issues that the prosecutor and the court encounters while changing the indictment. In the beginning, the author distinguishes between the amendment of indictment and other adjacent

procedural regulations, such as partial waiver of indictment, adjustment of indictment, bringing a new indictment. The author analyses the circumstances deriving from which the prosecutor shall decide upon the amendment of indictment. Afterwards the author notes that while deciding upon the permissibility of indictment amendment, the issue shall be resolved appropriately by distinguishing between real and ideal combination crime and a crime, and in the meantime taking into consideration the principles of individualization of punishment and double jeopardy.

Meanwhile, the author discusses the differences between the amendment of indictment and waiver of indictment initiated by the prosecutor. The author discusses also the modes of changing the indictment set forth in the existing Code and in the Draft. The author thoroughly analyses the modes stated by the Code and the Bill, by carrying out a comprehensive analysis between these two and recording the priority of the regulations set forth in the Bill.

The author examines the conditions of amending the indictment by the Court according to the existing provisions. While analyzing these conditions and taking into consideration the case law of European Court, the author concludes that the current Code doesn't provide any legal procedure regarding the possibility to discuss the possibility of applying other legal assessment to the facts imputed to the accused. It is succeeded by the analysis on the regulations set forth in the Bill prioritizing the latter and submitting recommendations regarding the further improvement of such regulations.

The author discusses also the legitimacy of power given to the Court of First Instance to freely change the legal assessment of the indictment, as well as while making it stricter, and has concluded that it is justified.